ՀԱՍՄԻԿ ՀՈՎԻԿԻ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 05.05.1977

Ծննդավայր՝ ՀՀ, մարզ Լոռի, գյուղ Շնող

Պատմական գիտությունների թեկնածու Հասմիկ Հովիկի Ամիրջանյանը Լոռու մարզի Շնող գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1993 թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1997 թ.:

2007 թ. ձևակերպվել է որպես հայցորդ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: 2009 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Լոռին XVIII դ. վերջին և XIX դ. առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» թեմայով:

Հ. Ամիրջանյանը 2006 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես լաբորանտ:

Հ. Ամիրջանյանը 2007 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես լաբորանտ, այնուհետև նշանակվել է կրտսեր և ավագ գիտաշխատողի պաշտոններում:

2019–2026 թթ. Հ. Ամիրջանյանը համատեղությամբ աշխատել է Երևանի Պ. Չայկովսկու անվան (2019-2022), այնուհետև՝ <<Արգենտինյան Հանրապետություն>> (2023-2026), թիվ 76 դպրոցներում՝ որպես պատմության ուսուցչուհի:

Հ. Ամիրջանյանը հեղինակ է 4 մենագրությունների, մոտ 70 գիտական հոդվածների, որից՝ 1 ընդգրկված է Scopus/Webofscience (Q 1) ՄԳՇ-ում:

Հ. Ամիրջանյանը գիտական զեկուցումներով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, ուսուցչական համաժողովներում:

Հ. Ամիրջանյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ գովեստագրով:

Հ. Ամիրջանյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի երկու որդի: